ՊԱՅՄԱՆԳԻՐ № ԼԳ-ՆՆ/ 112-105

Գազաֆիկացման *նախագծային, նախահաշվային կազմման և հետազոտական աշխատանքների կապալի մասին*

Ք. Վանաձոր *«24» հունվար 2024թ.*

«ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ, այսուհետ՝ Պատվիրատու, ի դեմս աշխատակազմի քարտուղար Անի Մարտիրոսյան, մի կողմից և Գազպրոմ Արմենիաե ՓԲԸ -ն (հետագայում՝ *Կատարող*) ի դեմս Լոռու ԳԳՄ տնօրեն Արթուր Լևոնի Նալբանդյանի, որը գործում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 05.01.2024թ. N01/15.2/50-2024 լիազորագրի հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով *Կատարողը* (նախագծողը, հետազոտողը) *Պատվիրատուի* հանձնարարությամբ կատարում է **Լոռու մարզ գ Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի փող. շ 7 «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքապետարանի աշխատակազմ»** ՀԿՀ-ի գազաֆիկացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի, անհրաժեշտության դեպքում նաև հետազոտական աշխատանքներ (հետագայում՝ *Աշխատանքներ*):

1.2 *Պատվիրատուն* պարտավորվում է ընդունել *Աշխատանքների* արդյունքը և իրականացնել սույն պայմանագրի 4.1 և 4.2 կետերով նախատեսված վճարումները:

1.3 Աշխատանքները համարվում են կատարված Կողմերի միջև Աշխատանքների արդյունքի հանձնման – ընդունման Ակտը ստորագրելու պահից:

2. Աշխատանքների կատարման համար ելակետային տվյալները

2.1 *Աշխատանքների* իրականացման նպատակով *Պատվիրատուն* պարտավոր է *Կատարողին* հանձնել նախագծային առաջադրանքը, ինչպես նաև այլ ելակետային տվյալներ, որոնք անհրաժեշտ են նախագծային փաստաթղթում փոփոխություն կատարելու համար:

2.2 *Աշխատանքները* կատարելու առաջադրանքի կատարման ընթացքում *Կատարողը* պարտավոր է պահպանել առաջադրանքում և ելակետային տվյալներում պարունակվող պահանջները:

3. Կողմերի պարտավորությունները

3.1 Պատվիրատուն պարտավորվում է.

3.1.1 *Կատարողին* հանձնել նախագծման հանձնարարությունը (առաջադրանքը), ինչպես նաև այն ելակետային տվյալները, որոնք անհրաժեշտ են տեխնիկական փաստաթղթերը կազմելու համար.

3.1.2 *Կատարողից* ստացած նախագծա-նախահաշվային փաստաթղթերն օգտագործել միայն սույն պայմանագրով նախատեսված նպատակներով, առանց *Կատարողի* համաձայնության դրանք չփոխանցել երրորդ անձանց և չհրապարակել դրանցում պարունակվող տվյալները.

3.1.3 *Աշխատանքների* կատարման ընթացքում աջակցել *Կատարողին* , ինչպես նաև *Կատարողի* հետ մասնակցել պատրաստի նախագծային փաստաթղթերը համապատասխան պետական և (կամ) տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցմանը.

3.1.4 հատուցել *Կատարողի* լրացուցիչ ծախսերը, որոնք առաջացել են *Աշխատանքների* կատարման համար ելակետային տվյալները *Կատարողից* անկախ հանգամանքների հետևանքով փոփոխվելու արդյունքում.

3.2 Կատարողը պարտավորվում է.

3.2.1 *Աշխատանքները* կատարել նախագծման առաջադրանքին, այլ ելակետային տվյալներին և սույն պայմանագրին համապատասխան.

3.2.2 պատրաստի նախագծային փաստաթղթերը համաձայնեցնել *Պատվիրատուի*, իսկ անհրաժեշտության դեպքում, *Պատվիրատուի* հետ միասին՝ իրավասու պետական և (կամ) տեղական ինքնակառավարման մարմինների հետ.

3.2.3 առանց *Պատվիրատուի* համաձայնության նախագծային փաստաթղթերը չհանձնել երրորդ անձանց:

4. Աշխատանքների կատարման ժամկետները, գինը և վճարման կարգը

4.1 Նախագծի մշակման արժեքի հաշվարկը (գինը) որոշվում է ՀՀ Քաղաքաշինության նախարարության 03.02.2008թ. N 19-Ն հրամանով հաստատված «Քաղաքաշինության փաստաթղթերի (Ծրագրային և ճարտարապետաշինարարական) մշակման աշխատանքների արժեքի հաշվարկման» Կարգում ամրագրված գնագոյացման նորմատիվների հիման վրա:

4.2 Սույն պայմանագրով նախատեսված *Աշխատանքների* գինը սահմանվում է 14840 ***(տասնչորս հազար ութ հարյուր քառասուն)*** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

4.3 *Կատարողը Աշխատանքները* սկսում է 2024թ. հունվարի 24-ին և ավարտում մինչև 2024 թ. ապրիլի 30-ը:

4.4 *Պատվիրատուն* վճարումները կատարում է սույն պայմանագրի 3.1.2 կետով սահմանված ժամկետում, կապալառուի տրամադրած վճարման փաստաթղթի հիման վրա՝ սույն պայմանագրի 9-րդ կետով նախատեսված *Կատարողի* բանկային հաշվին գումար փոխանցելու եղանակով:

4.5 Վճարման փաստաթղթի հիման վրա կատարված վճարումը հավաստող անդորրագիրը և/կամ վճարման հանձնարարագիրը *Կատարողի* համար հիմք է հանդիսանում աշխատանքները սկսելու և ավարտելու համար:

5. Հատուկ պայմաններ

5.1 Կողմերը երաշխավորում են, որ երրորդ անձանց մոտ բացակայում են նախագծային փաստաթղթերի հիման վրա աշխատանքներ կատարելուն խոչընդոտող կամ դրանց կատարելը սահմանափակող իրավունքներ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 *Կատարողը* պատասխանատվություն է կրում նախագծային փաստաթղթերը ոչ պատշաճ կազմելու և հետազոտական աշխատանքները ոչ պատշաճ կատարելու համար՝ ներառյալ նախագծային փաստաթղթերի և հետազոտական աշխատանքների տվյալների հիման վրա կատարված շին.հավաքակցման աշխատանքները:

6.2 Նախագծա-նախահաշվային փաստաթղթերում թերություններ հայտնաբերելու դեպքում *Կատարողը Պատվիրատուի* պահանջով, անհատույց վերափոխում է նախագծային փաստաթղթերը և, համապատասխանաբար, իրականացնում է լրացուցիչ հետազոտական և նախագծման աշխատանքներ:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկկողմ ստորագրման օրվանից և գործում է մինչ երկկողմ պարտավորությունների պատշաճ կատարումը:

7.2 Սույն պայմանագրում նշված ժամկետները կարող են փոփոխվել միայն կողմերի լրացուցիչ փոխ-համաձայնության դեպքում:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.2 Սույն պայմանագիրը կազմված է միևնույն իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

9.Կողմերի իրավաբանական հասցեները և բանկային վավերապայմանները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒ «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ գործուն. հասցե՝ Լոռու մարզ գ Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի փող. շ 7 իրավ. հասցե՝ Լոռու մարզ գ Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի փող. շ 7 ՀՎՀՀ՝ 06954163 Հ /հ՝ 900252144028 ՀՀ կենտրոնական գանձապետարան հեռ. 094-34-70-38 Աշխատակազմի քարտուղար _____Ա. Մարտիրոսյան	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Լոռու ԳԳՄ իրավ հասցե՝ ք. Վանաձոր Չուխաջյան 2/2-3/2 գործ. հասցե՝ ք. Վանաձոր Չուխաջյան 2/2-3/2 Բանկ «Արդշինբանկ» ՓԲԸ Լոռի մ/ճ Հ/Հ 2479104269870010 ՀՎՀՀ 00046317 Լոռու ԳԳՄ տնօրեն՝ _____Ա. Գալբանդյան